ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

13 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 26** քաղ. Մոսկվա

Երրորդ երկրների շուկաներում ապրանքների առաջմղման նպատակներով թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողներին աջակցելուն ուղղված միջոցների մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 3 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության զարգացման 2015-2016 թվականների միջոցառումների պլանի 11-րդ կետի, Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների իրագործման նպատակներով, «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությանը, «Արտահանման

զարգացմանն ուղղված միջոցների մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 2 որոշմանը համապատասխան,

հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից արտադրվող թեթեւ արդյունաբերության արտադրանքի արտահանման զարգացման համար, այդ թվում՝ համատեղ արտադրանքի արտադրության տեխնոլոգիական կոոպերացիոն շղթաների շրջանակներում (այսուհետ՝ թեթեւ արդյունաբերության արտադրանք), պայմաններ ստեղծելու, ինչպես նաեւ արտահանմանն ուղղված բարձր տեխնոլոգիական արտադրությունները զարգացնելու անհրաժեշտությունը,

հանձնարարում է անդամ պետություններին՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականը հրապարակելու օրվանից.

1. Երրորդ երկրների շուկաներում ապրանքների առաջմղման նպատակներով թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողներին աջակցելուն ուղղված միջոցառումները պլանավորելիս եւ իրագործելիս հաշվի առնել հանձնարարելի պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնել՝

ա) մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը՝

անդամ պետություններում առկա՝ արտահանողներին տեղեկատվախորհրդատվական օժանդակության ինտերնետ ծառայությունների, անդամ պետություններում անցկացվող ցուցահանդեսատոնավաճառային միջոցառումների, բիզնես-առաքելությունների եւ թեթեւ արդյունաբերության արտադրանքի մասնագիտացված ցուցահանդեսների մասին տեղեկատվությունը՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում զետեղելու համար.

Եվրասիական տնտեսական միության մարմինների կողմից՝ անհրաժեշտության դեպքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

մասնակցությամբ անդամ պետությունների կողմից երրորդ երկրների շուկաներում թեթեւ արդյունաբերության ապրանքների առաջմղմանն ուղղված համատեղ միջոցների մշակման եւ իրագործման ակտերի ընդունման վերաբերյալ առաջարկները.

բ) մինչեւ 2017 թվականի հոկտեմբերի 1-ը՝ 2018 թվականի համար թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողների ցուցահանդեսատոնավաճառային միջոցառումների եւ բիզնես-առաքելությունների համատեղ ծրագրի մասին առաջարկները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից դրա ձեւ ավորման եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի կողմից ուսումնասիրելու նպատակով հետագա ներկայացման համար։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 26 հանձնարարականի

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ՊԼԱՆ

2017-2020 թվականներին երրորդ երկրների շուկաներում ապրանքների առաջմղման նպատակներով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողներին աջակցելուն ուղղված միջոցառումների

Միջոցառումը	Իրագործման ձեւը
1. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) ազգային արտահանման-վարկային գործակալությունների, զարգացման ֆինանսական ինստիտուտների եւ զարգացման միջազգային բանկերի հետ համատեղ թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողներին ֆինանսական աջակցության մեխանիզմների եւ նրանց համար ֆինանսական ծառայությունների, ինչպես նաեւ այլ ծառայությունների եւ տեխնոլոգիաների հասանելիության ընդլայնմանն ուղղված միջոցներ ընդունելու հնարավորությունը որոշելը՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերին ու կանոններին եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության դրույթներին համապատասխան՝ ներառյալ	անդամ պետությունների ակտեր
որակի համաշխարհային ստանդարտներին համապատասխանող թեթեւ արդյունաբերության արտադրանք արտադրող՝ փոքր եւ միջին	

Միջոցառումը	Իրագործման ձեւը
ձեռնարկատիրության տնտեսավարող սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության աջակցության համար ենթակառուցվածքի զարգացումը	
օտարերկրյա պատվիրատուների մասնակցությամբ միջազգային բրենդների կարի եւ կոշիկի արտադրանքի պայմանագրային արտադրության զարգացման խթանումը՝ արտահանման նպատակով մատակարարելու համար	
թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողների այն ծախսերի փոխհատուցումը, որոնք կապված են հետեւյալի հետ՝	
երրորդ երկրների շուկաներում անդամ պետությունների առեւտրային նշանների (ծառայությունների, տեխնոլոգիաների) առաջմղում, միջազգային ցուցահանդեսատոնավաճառային եւ էքսպոզիցիոն գործունեություն (ներառյալ ցուցահանդեսային սարքավորումների վարձակալություն եւ ցուցադրանմուշների առաքում)	
մանածագործական եւ թեթեւ արդյունաբերության համար ապրանքների ու սարքավորումների ամենամյա ազգային մեծածախ տոնավաճառներում մասնակցություն	
թեթեւ արդյունաբերության նոր արտադրանքի մշակում, դրա որակի բարձրացում եւ նոր տեխնոլոգիաների ներդնում, երրորդ երկրների շուկաների մարքեթինգային հետազոտությունների անցկացում	
երրորդ երկրներում թեթեւ արդյունաբերության արտադրանքի համապատասխանության հավաստում	անդամ պետությունների ակտեր
այն մասնագիտացված ֆինանսական ծրագրերի ստեղծումը եւ զարգացումը, որոնցով նախատեսվում են, այդ թվում, վարկային-	

Միջոցառումը	Իրագործման ձեւը
ապահովագրական եւ երաշխիքային աջակցության, արտահանման ֆինանսավորման հատուկ պայմաններ, ինչպես նաեւ ֆակտորինգի ծառայություններ, երրորդ երկրներում անդամ պետությունների համատեղ առեւտրային ցանցերի ստեղծման հետ կապված գործունեության ներդրումային վարկավորում, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության պայմաններով	
2. Անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանքն արտադրողներին, հատկապես փոքր եւ միջին ձեռնարկատիրության տնտեսավարող սուբյեկտներին տեղեկատվախորհրդատվական եւ կազմակերպական աջակցության ընդլայնման հնարավորությունը որոշելը, այդ թվում՝	
էլեկտրոնային առեւ տրային հարթակներ մուտք գործելու հարցերով, այդ թվում՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաներ եւ միջազգային փոստային ծառայություններ	
փորձի փոխանակման եւ թեթեւ արդյունաբերությունում արդյունաբերական դիզայնի տեխնոլոգիաների կիրառման, կարի արդյունաբերությունում նորարարությունների եւ միտումների, այդ թվում՝ համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման լավագույն միջազգային պրակտիկաների մասին տեղեկատվության տրամադրման հարցերով	
երրորդ երկրների շուկաներում անդամ պետությունների թեթեւ արդյունաբերության արտադրանքի հասանելիության համար խոչընդոտների հետ կապված հարցերով	